ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2023թ. օգոստոսի 2 -ին, N 318 -Ա

ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԻՐԻՆԴԻ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԻԿՏՈՐՅԱ ԽՈՋԱԲԵԿՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՉՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածներով և 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Իրինդի Մ. Քոթանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վիկտորյա Խոջաբեկյանի 2023 թվականի օգոստոսի 1-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Իրինդի Մ. Քոթանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վիկտորյա Խոջաբեկյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդի չօգտագործած մասը 2022-2023 թվականների ուսումնական տարվա համար 5 աշխատանքային օր տևողությամբ՝ 2023 թվականի օգոստոսի 7-ից օգոստոսի 11-ը ներառյալ:
2. Վիկտորյա Խոջաբեկյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Իրինդի Մ. Քոթանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Իրինդի Մ. Քոթանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Լուսինե Վարդանյանի վրա:
3. Վիկտորյա Խոջաբեկյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի օգոստոսի 14-ից:

Восстановимая подпись

X

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒԼՅԱՆ

Подписано: GULYAN HARUTYUN 3102850391

/Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ